Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՄՆ << Գյումրու Ակադեմիական վարժարան >> ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն /18 ժամ/, կենսաբանություն / 11 ժամ /, ֆիզկուլտուրա /11 ժամ/ և երաժշտություն /3 ժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթի մասնակցելու համար պետք է ներկայացնել

1. դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև1), մեկ լուսանկար՝ 3×4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը
4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-14:00 բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ս/թ սեպտեմբերի 8-ին 15:00-ին ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու Ակադեմիական վարժարանում: Հասցեն՝ ք.Գյումրի, Ռեպինի 2: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0312) 3-23-79 հեռախոսահամարով:

ՀՎՀՀ 05504628